# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«27» Նոյեմբեր 2020թ. N ՄՊ/154-2020

ք. Արմավիր

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N ՄՈ/160-2019 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշումով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի պահանջները.

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/160-2019 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշմամբ հաստատված N 97 հավելվածի 1-ին կետում «Պողոսյան Արթուր» բառերը փոխարինել «Ավչյան Արմեն» բառերով:
   2) որոշմամբ հաստատված N 111 հավելվածի 1-ին կետում «Հերոյան Բավական» բառերը փոխարինել «Ալեքսանյան Վարդան» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***Մարզպետ՝*** ***Հ.Մաթևոսյան***

27.05.2020

X [signature]

VERIFIED OCSP 27.05.2020 13:25:47 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230